ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի, Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա. Վեհափառի փողոց, հեռ. (222)65203 , էլ .փոստ byureghavan. kotayq @mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մարտի 2015 թվականի № 19 – Ա

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19 – Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15–րդ հոդվածով և հիմք ընդունելով Բյուրեղավանի քաղաքային համայնքի ղեկավարի 2015թվականի մարտի 13-ի N 77 – Ա որոշումը՝ **ավագանին որոշում է.**

Հաստատել Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի մարտի 19 - ի արտահերթ նիստի օրակարգը .

1. Բյուրեղավանի քաղաքային համայնքի 2014թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին,
2. Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2010թվականի հունվարի 14-ի N04-Ն, 2012թվականի հոկտեմբերի 5-ի N160-Ն, 2014թվականի մարտի 11-ի N15-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու և 2012թվականի մարտի 19-ի N 13-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին,
3. Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու և մեկնարկային գները հաստատելու մասին,
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**Կողմ (9)** **Դեմ ( 0 )** **Ձեռնպահ (0)**

ԱՎԵՏԻՔ ԱՍՈՅԱՆ ________
ԳԵՎՈՐԳ ԲԱԴԻԿՅԱՆ ________
ԱՐԹԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ________
ԱՐՄԱՆ ԽԱՆՋԱԴՅԱՆ ________
ԳԱՐԻԿ ԾԱՏՐՅԱՆ ________
ՎՈԼՈԴՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ________
ՍԼԱՎԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ________
ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ ________
ԱՐՄԱՆ ՕՀԱՆՅԱՆ ________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի, Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա. Վեհափառի փողոց, հեռ. (222)65203 , էլ .փոստ byureghavan. kotayq @mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մարտի 2015 թվականի № 20 – Ն

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16–րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35–րդ հոդվածի 1-ին մասին 6-րդ կետով՝ **ավագանին որոշում է.**

1.Հաստատել Բյուրեղավանի քաղաքային համայնքի 2014 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը. եկամուտների մասով՝ 178882.4 հազար դրամ, ծախսերի գծով՝ 165608.5 հազար դրամ , տարեվերջի ազատ մնացորդ 13289.5 հազար դրամ ՝ համաձայն N1, N 2 հավելվածների :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Կողմ (9)** **Դեմ ( 0 )** **Ձեռնպահ (0)**

ԱՎԵՏԻՔ ԱՍՈՅԱՆ ____________

ԳԵՎՈՐԳ ԲԱԴԻԿՅԱՆ ____________

ԱՐԹԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ____________

ԱՐՄԱՆ ԽԱՆԶԱԴՅԱՆ ____________

ԳԱՐԻԿ ԾԱՏՐՅԱՆ ____________

ՎՈԼՈԴՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ____________

ՍԼԱՎԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________

ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ ____________

ԱՐՄԱՆ ՕՀԱՆՅԱՆ ____________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի, Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա. Վեհափառի փողոց, հեռ. (222)65203 , էլ .փոստ byureghavan. kotayq @mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մարտի 2015 թվականի № 21 – Ն

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի N04-Ն, 2012ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 160-Ն, 2014ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N 15-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2012ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N 13 -Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով , 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ) ենթակետով և հիմք ընդունելով «Վարմօն Ռիելթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2015 թվականի փետրվարի 04-ի թիվ «020-02/Վ-015», փետրվարի 10-ի թիվ «021-01/Վ-015» և «022-01/Վ-015» գրությունները և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **ավագանին որոշում է.**

1. Հաշվի առնելով որ Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու որոշումներով համայնքային սեփականություն համարվող «ՅՈՒՄԶ 64Լ» անվավոր էքսկավատորի (վկայական N013998), Ս. Վարդանյանի փողոց 6 շենքի թիվ 45 բացվածքի (վկայական N2288731 տրված 2009 թվականի սեպտեմբերի 04-ին), Վազգեն Սարգսյանի փողոց 16 շենքի թիվ 44 տարածքի (վկայական N2730770 տրված 2010 թվականի ապրիլի 14-ին), համար նախկինում սահմանվել են մեկնարկային գներ և մի քանի անգամ ներկայացվել են աճուրդ - վաճառքի, սակայն աճուրդների համար հայտեր չեն ներկայացվել, հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ նվազեցնել մեկնարկային գները և սահմանել նոր մեկնարկային գներ՝ կատարել փոփոխություններ Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու որոշումներում.

1) Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2010 թվականի հունվարի 14-ի «Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող գույքի օտարման մեկնարկային գները հաստատելու մասին» N 04 - Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշմամբ հաստատված հավելվածում «3.100.0 հազար դրամ» թվերը և բառերը փոխարինել «2600000 (երկու միլիոն վեց հարյուր հազար) դրամ» թվերով և բառերով,

2) Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2012թվականի հոկտեմբերի 5-ի «Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող գույքը աճուրդ – վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գները հաստատելու մասին» N 160-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշմամբ հաստատված հավելվածում «1.300.0 հազար դրամ» թվերը և բառերը փոխարինել «1100000 (մեկ միլիոն հարյուր հազար) դրամ» թվերով և բառերով,

3) Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2014թվականի մարտի 11-ի «Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու և մեկնարկային գները հաստատելու մասին» N 15-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշմամբ հաստատված N1 հավելվածում «900.000 հազար դրամ» թվերը և բառերը փոխարինել «700000 (յոթ հարյուր հազար) դրամ» թվերով և բառերով:

2. Ուժը կորցրած ճանաչել Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2012թվականի մարտի 19-ի «Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող գույքը աճուրդ – վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն մասին» N 13-Նորոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (9) Դեմ ( 0 ) Ձեռնպահ (0)

ԱՎԵՏԻՔ ԱՍՈՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԲԱԴԻԿՅԱՆ
ԱՐԹԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
ԱՐՄԱՆ ԽԱՆԶԱԴՅԱՆ
ԳԱՐԻԿ ԾԱՏՐՅԱՆ
ՎՈԼՈԴՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ՍԼԱՎԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ
ԱՐՄԱՆ ՕՀԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի, Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա. Վեհափառի փողոց, հեռ. (222)65203 , էլ .փոստ byureghavan. kotayq @mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մարտի 2015 թվականի № 22 – Ն

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով 1-ին մասի 20-րդ կետով և հիմք ընդունելով փետրվարի 19-ի թիվ «018-01/Վ-015», փետրվարի 20-ի թիվ «019-01/Վ-015», փետրվարի 25-ի թիվ «035-01/Վ-015» գրությունները և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **ավագանին որոշում է.**

1. Հավանություն տալ Բյուրեղավանի քաղաքային համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ թույլատրել օտարել Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող գույքը՝

1) Զ. Անդրանիկի փողոց թիվ 1/8/1 շինություններ և հողամաս (վկայական N02022015-07-0027 տրված 2015 թվականի փետրվարի 02-ին),

2) Զ. Անդրանիկի փողոց թիվ 40/25/3 շինություններ և հողամաս (վկայական N02022015-07-0028 տրված 2015 թվականի փետրվարի 02-ին)

3) Վազգեն Սարգսյանի փողոց 15 շենքի թիվ 37 տարածք (վկայական N2730769 տրված 2010 թվականի ապրիլի 14-ին) :

2.Հաստատել գույքի օտարման մեկնարկային գները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Կողմ (9)** **Դեմ ( 0 )** **Ձեռնպահ (0)**

ԱՎԵՏԻՔ ԱՍՈՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԲԱԴԻԿՅԱՆ

ԱՐԹԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ԽԱՆՋԱԴՅԱՆ

ԳԱՐԻԿ ԾԱՏՐՅԱՆ

ՎՈԼՈԴՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՍԼԱՎԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐԳԱՄ ՇԱՌՈՅԱՆ

ԱՐՄԱՆ ՕՀԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

Հավելված N01
Բյուրեղավանի քաղաքայի համայնքի ավագանու
2015 թվականի մարտի 19-ի N 20- Ն որոշման

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

## ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

2014 թվականի բյուջեով նախատեսվել էր ստանալ 172736.2հազ.դրամ եկամուտներ և պաշտոնական այլ ընթացիկ դրամաշնորհներ, որից 35968.1 հազ.դրամը՝ սեփական եկամուտների գծով, 136768.1 հազ.դրամը պաշտոնական այլ ընթացիկ դրամաշնորհներ տեսքով: Տարվա արդյունքներով համայնքի բյուջեի փաստացի եկամուտները գերազանցել են նախատեսվածը 3.6%-ով: 172736.2 հազ.դրամ հաստատված ծրագրի դիմաց փաստացի եկամուտները կազմել են 178882.4 հազ.դրամ:Ընդ որում սեփական եկամուտների հաշվին կատարողականը կազմել է 117.1 %, իսկ պաշտոնական տրանսֆերտների կատարողականը կազմել է 100%:

2013թվականի համեմատ համայնքի բյուջեի եկամուտներն ու պաշտոնական այլ ընթացիկ դրամաշնորհներն աճել են 20.3 %-ով կամ 30222.5 հազ.դրամով:

2014թվականի համայնքի բյուջեի հարկային եկամուտների՝ հողի հարկի և գույքահարկի գծով, մուտքերը կազմել են 35450.0 հազ.դրամ, ապահովելով նախատեսված եկամուտների 118,5 %-ը, ավել է մուտքագրվել 5543.9 հազ.դրամ:

2014թվականին հարկային եկամուտները ունեցել են հիմնականում կայուն վարքագիծ՝ կատարվել են եռամսյակային և ամսական ծրագրերը՝ ապահովելով համայնքի բյուջեի ծախսերի՝ ժամանակին և նախատեսված համամասնություններով կատարումը:

2013թվականի համեմատ՝ հարկային եկամուտները աճել են 12.1 %-ով կամ 3828.0 հազ.դրամով:

2014 թվականի համայնքի բյուջեի տեղական տուրքերի փաստացի մուտքերը կազմել են 1773.9 հազ. դրամ, որը ապահովել է նախատեսվածի 106.1 %-ը:

2013թվականի համեմատ՝ տեղական տուրքերը նվազել են 2.9 %-ով կամ 53.8 հազ.դրամով, որը պայմանավորված է արտաքին գովազդի համար տեղական տուրքերի կրճատումով:

Այլ եկամուտների մուտքերը կազմել են 4890.7 հազ. դրամ, ապահովելով նախատեսվածի 111.4%-ը:

Պետական պաշտոնական այլ ընթացիկ դրամաշնորհներ կազմել են 136767.8 հազ. դրամ, ապահովել է նախատեսվածի 100 %-ը, որը 2013թվականի համեմատ աճել է 22.1%-ով կամ 24723.6հազ.դրամ:

## ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

2014 թվականի ընթացքում համայնքի բյուջեի միջոցների հաշվին իրականացվել են 184102.1 հազ.դրամի ծախսեր՝ կազմելով տարեկան ճշտված ծրագրի 93.2%-ը: 2014թվականին ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի բյուջետային պարտքը կազմել է 2950.0 հազ. դրամ, իսկ ընթացիկ ծախսերի

գծով նախատեսված հատկացումների սահմաններում համայնքային մարմինների կողմից ստանձնած պարտավորությունները, որոնց համար սահմանված կարգով ներայացվել են ֆինանսավորման հայտեր, ամբողջությամբ և ժամանակին ֆինանսավորվել են:

2014թվականին, նախորդ տարվա համեմատ, բյուջետային ծախսերի աճը ավելացել է 28922.9 հազ.դրամով կամ 18.6%-ով:

**Գործառական դասակարգում**

2014 թվականին համայնքի բյուջեից ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների բնագավառի ծախսերը կազմել են 41493.2հազ. դրամ, ապահովելով նախատեսված ծախսերի 96.0 % կատարողական:

2014 թվականին ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների ծախսերի բաժինը համայնքի բյուջեի ընդհանուր ծախսերում կազմել է 22.5 %՝ նախորդ տարվա 33.1 %-ի դիմաց:

Օրենսդիր և գործադիր մարմինների ծախսերը հաշվետու ժամանակաշրջանում կազմել են 39232.6 հազ.դրամ՝ ապահովելով նախատսված ծախսերի 96.8 %-ը:

2014 թվականին տնտեսական հարաբերությունների ոլորտի ծախսերը կազմել են 19611.3 հազ.դրամ՝ 99.0%-ով կատարելով տարեկան ծրագիրը:

2014 թվականին տնտեսական հարաբերությունների ոլորտի ծախսերի բաժինը համայնքի բյուջեի ընդհանուր ծախսերում կազմել է 10.7 %՝ նախորդ տարվա 1.9%-ի դիմաց:

2014 թվականին շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտի ծախսերը կազմել են 35344.4 հազ.դրամ՝100 %-ով կատարելով տարեկան ծրագիրը:

2014 թվականին շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտի ծախսերի բաժինը համայնքի բյուջեի ընդհանուր ծախսերում կազմել է 19.2 % նախորդ տարվա 22.8 %-ի դիմաց:

2014 թվականին բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության ոլորտի ծախսերը կազմել են 22887.7 հազ.դրամ, ապահովելով նախատեսված ծախսերի 76.1% կատարողական:

2014 թվականին բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության ոլորտի ծախսերի բաժինը համայնքի բյուջեի ընդհանուր ծախսերում կազմել է 12.4 % նախորդ տարվա 7.8 %-ի դիմաց:

2014 թվականին հանգստի, մշակույթի և կրոնի ոլորտի ծախսերը կազմել են 8906.2 հազ.դրամ, ապահովելով նախատեսված ծախսերի 92.2 % կատարողական: Հաշվետու տարում մշակույթի տան, գրադարանին հատկացվել է 2614.8 հազ.դրամ, որը կազմում է նախատեսվածի 84.5 %-ը, այլ մշակութային և սպորտային միջոցառումներին հատկացվել է 3996.4.0 հազ.դրամ, որը կազմում է՝99.7 %-ը:

2014 թվականին հանգստի, մշակույթի և կրոնի ոլորտի ծախսերի բաժինը համայնքի բյուջեի ընդհանուր ծախսերում կազմել է 4.8 %, նախորդ տարվա 5.2 %-ի դիմաց:

2014 թվականին կրթության ոլորտի ծախսերը կազմել են 50554.3 հազ.դրամ, ապահովելով նախատեսված ծախսերի 93.8 % կատարողական:

2014 թվականին կրթության ոլորտի ծախսերի բաժինը համայնքի բյուջեի ընդհանուր ծախսերում կազմել է 27.5 %, նախորդ տարվա 27.2%-ի դիմաց:

2014 թվականին սոցիալական ապահովության ոլորտի ծախսերը կազմել են 5205.0 հազ.դրամ, ապահովելով նախատեսված ծախսերի 96.2 % կատարողական:

Սոցիալական ծախսերի գերակշռող մասը բաժին է ընկնում քաղաքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնության հատկացմանը, ինչպես նաև 2014թվականին քաղաքաում գործել է բարեգործական ճաշարան, որի համար ծախսվել է 1760.0 հազ.դրամ:

2014 թվականին սոցիալական ապահովության ոլորտի ծախսերի բաժինը համայնքի բյուջեի ընդհանուր ծախսերում կազմել է 2.8 %, նախորդ տարվա 1.9 %-ի դիմաց:

**Տնտեսագիտական դասակարգում**

Ըստ տնտեսագիտական բովանդակության համայնքի 201 4թվականի բյուջեի ծախսերն ունեցել են հետևյալ կառուցվածքը. դրանց 90.0 %-ն ուղղվել է ընթացիկ , 10.0 %-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը:

**Ընթացիկ ծախսեր**

2014 թվականի համայնքի բյուջեի ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը հատկացվել է 165608.5 հազ.դրամ, որը կազմում է տարեկան ծրագրի 90.0 %-ը:Շեղումը առաջացել է հիմնականում աշխատավարձի ֆոնդի և ապրանքների և ծառայությունների ձեռք բերման տնտեսումից:Նախորդ տարվա համեմատ՝ ընթացիկ ծախսերը ավելացել են 27.8 %-ով:

Հաշվետու տարում ընթացիկ ծախսերի 17.3 %-ը՝ 31886.5 հազ.դրամ, տրամադրվել է համայնքային հիմնարկների աշխատողների աշխատավարձերի վճարմանը:Աշխատավարձերի գծով օգտագործվել է տարեկան նախատեսված միջոցների 96.3 %-ը:

2014 թվականի համայնքի բյուջեից տրամադրվել է 87843.9 հազ.դրամի սուբսիդիա, որը նախատեսված ծրագրի 95.3 %-ն է, որը հատկացվել է կրթության և աղբահանության ոլորտին: Նախորդ տարվա համեմատ տրամադրված սուբսիդիաների գումարը աճել է 27.8 %-ով կամ 19093.3 հազ.դրամով:

**Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր**

2014 թվականի համայնքի բյուջեից կատարվել է 18493.6 հազ.դրամի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր, որոնք կազմում են ընդհանուր ծախսերի 10 %-ը և տարեկան ծրագրի 74.6 %-ը:

2014 թվականի համայնքի բյուջեում ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը նախատեսված 12000.0 հազ.դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 6716.5 հազ.դրամ:

2014թվականի համայնքի բյուջեի տարեվերջի ազատ մնացորդը կազմել է 13289.5 հազ.դրամ, որից 13273.9 հազ.դրամը վարչական բյուջեում, 15.6հազ.դրամը ֆոնդային բյուջեում:

## *ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2013– 2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ*

| | 2013թ. տարեկան կատարող | 2014թ. տարեկան պլան | 2014թ ճշտված ծրագիր | 2014թ տարեկան կատարող | Տարեսկզբի ծրագրի կատարում % | Ճշտված ծրագրի կատարում % | Աճը նախորդ տարվա նկատմամբ | 2014թ 2013թ փաստ.նկատ. % |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ընդամենը եկամուտներ | 148659.9 | 170252.4 | 172736.2 | 178882.4 | 105.1 | 103.6 | 30222.5 | 120.3 |
| Հարկային եկամուտներ, որից | 31622.0 | 29906.1 | 29906.1 | 35450.0 | 118.5 | 118.5 | 3828.0 | 112.1 |
| Հողի հարկ | 7554.5 | 6307.8 | 6307.8 | 7075.1 | 112.2 | 112.2 | -479.4 | 93.7 |
| Գույքահարկ | 24067.5 | 23598.3 | 23598.3 | 28374.9 | 120.2 | 120.2 | 4307.4 | 117.9 |
| Տեղական տուրքեր | 1827.7 | 1672.0 | 1672.0 | 1773.9 | 106.1 | 106.1 | -53.8 | 97.1 |
| Պաշտոնական ընթացիկ դրամաշն. | 112044.2 | 136484.3 | 136768.1 | 136767.8 | 100.0 | 100.0 | 24723.6 | 122.1 |
| Այլ եկամուտներ | 3166.0 | 2190.0 | 4390.0 | 4890.7 | 223.3 | 111.4 | 1724.7 | 154.5 |
| Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր | 12969.3 | 12000.0 | 12000.0 | 6716.5 | 51.7 | 51.7 | -6252.4 | 51.8 |
| Տարեսկզբի ազատ մնացորդ | 5342.6 | 11792.6 | 11792.6 | 11792.6 | 100.0 | 100.0 | 6450.0 | 220.7 |
| Ընդամենը | 166971.8 | 194045.0 | 197528.5 | 197391.5 | 101.7 | 99.9 | 30419.7 | 118.2 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ընդամենը ծախսեր | 155179.2 | 194045.0 | 197528.5 | 184102.1 | 94.9 | 93.2 | 28922.9 | 118.6 |
| Ընթացիկ ծախսեր, այդ թվում | 129543.3 | 170252.4 | 172736.2 | 165608.5 | 97.3 | 95.9 | 36065.2 | 127.8 |
| Տեղ. ինքնակառ. մարմնի, դրանց ենթ-հիմն. աշխատ. աշխատավարձ | 29043.3 | 33095.0 | 33095.0 | 31886.5 | 96.3 | 96.3 | 2843.2 | 109.8 |
| Ապրանքն. գնման և ծառ. վճ. ծախս | 19875.9 | 23800.0 | 36225.0 | 35282.2 | 148.2 | 97.4 | 15406.3 | 177.5 |
| Սուբսիդիաներ | 68750.6 | 92156.3 | 92156.3 | 87843.9 | 95.3 | 95.3 | 19093.3 | 127.8 |
| Դրամաշնորհներ | 8136.3 | 2971.2 | 6759.9 | 6759.6 | 227.5 | 100.0 | -1376.7 | 83.1 |
| Սոցիալական նպաստներ | 3000.0 | 3000.0 | 3650.0 | 3445.0 | 114.8 | 94.4 | 445.0 | 114.8 |
| Այլ ծախսեր | 623.0 | 650.0 | 500.0 | 391.0 | 60.2 | 78.2 | -232.0 | 62.8 |
| Ոչ ֆինանսական ակտիվների գռվ ծախսեր, այդ թվում | 25635.9 | 24792.6 | 24792.6 | 18493.6 | 74.6 | 74.6 | -7142.3 | 72.1 |
| Հիմնական միջոցներ | 25635.9 | 24792.6 | 24792.6 | 18493.6 | 74.6 | 74.6 | -7142.3 | 72.1 |

Հավելված N 02
Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու
2015թվականի մարտի 19 -ի N 20 – Ն որոշման

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### (01.01.2014թ.- 30.12.2014 թ. ժամանակահատվածի համար)

| Տողի NN | Եկամտատեսակները | Հոդվածի NN | Տարեկան հաստատված պլան | | | Տարեկան ճշտված պլան | | | Փաստացի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում` վար-չական մաս | այդ թվում` ֆոն-դային մաս | Ընդամենը (ս.8+ս.9) | այդ թվում` վար-չական մաս | այդ թվում` ֆոն-դային մաս | Ընդամենը (ս.11+ս.12) | այդ թվում` վար-չական մաս | այդ թվում` ֆոն-դային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| **1000** | **ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200+տող 1300) այդ թվում`** | | 170252.4 | 170252.4 | 0.0 | 172736.2 | 172736.2 | 0.0 | 178882.4 | 178882.4 | 0.0 |
| **01100** | **1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ** (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1150 + տող 1160) այդ թվում` | 7100 | 31578.1 | 31578.1 | **X** | 31578.1 | 31578.1 | **X** | 37223.9 | 37223.9 | **X** |
| **1110** | **1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից** այդ թվում` | 7131 | 17041.1 | 17041.1 | **X** | 17041.1 | 17041.1 | **X** | 19178.5 | 19178.5 | X |
| 1111 | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | | 10733.3 | 10733.3 | X | 10733.3 | 10733.3 | X | 12103.4 | 12103.4 | X |
| 1112 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | | 6307.8 | 6307.8 | X | 6307.8 | 6307.8 | X | 7075.1 | 7075.1 | X |
| **1120** | **1.2 Գույքային հարկեր այլ գույքից** այդ թվում` | 7136 | 12865.0 | 12865.0 | **X** | 12865.0 | 12865.0 | **X** | 16271.5 | 16271.5 | **X** |
| 1121 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | | 12865.0 | 12865.0 | X | 12865.0 | 12865.0 | X | 16271.5 | 16271.5 | X |
| **1130** | **1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ** այդ թվում` | 7145 | 1672.0 | 1672.0 | **X** | 1672.0 | 1672.0 | **X** | 1773.9 | 1773.9 | **X** |
| 1131 | Տեղական տուրքեր (տող 1132 + տող 1135 + տող 1136 + տող 1137 + տող 1138 + տող 1139 + տող 1140 + տող 1141 + տող 1142 + տող 1143 + տող 1144+տող 1145) այդ թվում` | 7145 | 1672.0 | 1672.0 | X | 1672.0 | 1672.0 | X | 1773.9 | 1773.9 | X |
| 1132 | ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար (տող 1133 + տող 1334), որից | | 90.0 | 90.0 | X | 90.0 | 90.0 | X | 70.0 | 70.0 | X |
| 1133 | աա) Հիմնական շինությունների համար | | 90.0 | 90.0 | X | 90.0 | 90.0 | X | 70.0 | 70.0 | X |
| 1134 | աբ) Ոչ հիմնական շինությունների համար | | | | X | | | X | | | X |
| 1135 | բ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված` | | 75.0 | 75.0 | X | 75.0 | 75.0 | X | 134.0 | 134.0 | X |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) կատարելու թույլտվության համար | | | | | | | | | | |
| 1136 | գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար | | | | X | - | - | X | 10.0 | 10.0 | X |
| 1137 | դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար | | 1040.0 | 1040.0 | X | 1040.0 | 1040.0 | X | 937.0 | 937.0 | X |
| 1138 | ե) Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար | | 100.0 | 100.0 | X | 100.0 | 100.0 | X | 46.5 | 46.5 | X |
| 1139 | զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար | | 150.0 | 150.0 | X | 150.0 | 150.0 | X | 155.0 | 155.0 | X |
| 1142 | թ) Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար | | 157.0 | 157.0 | X | 157.0 | 157.0 | X | 421.4 | 421.4 | X |
| 1146 | ժգ)Ավտոկայանատեղի համար | | 100.0 | 100.0 | X | 100.0 | 100.0 | X | 0.0 | 0.0 | X |
| **1200** | **2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ** (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260) այդ թվում՝ | **7300** | 136484.3 | 136484.3 | 0.0 | 136768.1 | 136768.1 | 0.0 | 136767.8 | 136767.8 | 0.0 |
| **1250** | **2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից** (տող 1251 + տող 1254 + տող 1257 + տող 1258) որից՝ | **7331** | 136484.3 | 136484.3 | **X** | 136768.1 | 136768.1 | **X** | 136767.8 | 136767.8 | **X** |
| 1251 | ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | | 135513.1 | 135513.1 | X | 135513.1 | 135513.1 | X | 135513.1 | 135513.1 | X |
| 1257 | գ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | 971.2 | 971.2 | 0.0 | 1255.0 | 1255.0 | 0.0 | 1254.7 | 1254.7 | 0.0 |
| **1300** | **3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** | **7400** | 2190.0 | 2190.0 | 0.0 | 4390.0 | 4390.0 | 0.0 | 4890.7 | 4890.7 | 0.0 |
| **1330** | **3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ** (տող 1331 + տող 1332 + տող 1333 + 1334) այդ թվում՝ | **7415** | 400.0 | 400.0 | **X** | 400.0 | 400.0 | **X** | 835.5 | 835.5 | **X** |
| 1331 | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | | 400.0 | 400.0 | X | 400.0 | 400.0 | X | 835.5 | 835.5 | X |
| **1350** | **3.5 Վարչական գանձումներ** (տող 1351 + տող 1352 + տող 1353) այդ թվում՝ | **7422** | 1240.0 | 1240.0 | **X** | 2840.0 | 2840.0 | **X** | 2865.2 | 2865.2 | **X** |
| 1351 | Տեղական վճարներ | | 240.0 | 240.0 | X | 240.0 | 240.0 | X | 340.0 | 340.0 | X |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1352 | Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | | 1000.0 | 1000.0 | X | 2600.0 | 2600.0 | X | 2525.2 | 2525.2 | X |
| 1353 | Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ | | | | X | | | X | | | X |
| **1360** | **3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից** (տող 1361 + տող 1362) այդ թվում` | **7431** | 50.0 | 50.0 | **X** | 50.0 | 50.0 | **X** | 230.0 | 230.0 | **X** |
| 1361 | Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ | | 50.0 | 50.0 | X | 50.0 | 50.0 | X | 230.0 | 230.0 | X |
| 1390 | **3.9 Այլ եկամուտներ** (տող 1391 + տող 1392 + տող 1393) այդ թվում` | **7452** | 500.0 | 500.0 | 0.0 | 1100.0 | 1100.0 | 0.0 | 960.0 | 960.0 | 0.0 |
| 1391 | Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր | | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 |
| 1392 | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | | X | X | 0.0 | X | X | 0.0 | X | X | 0.0 |
| 1393 | Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված` համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ | | 500.0 | 500.0 | 0.0 | 1100.0 | 1100.0 | 0.0 | 960.0 | 960.0 | 0.0 |

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
**(գործառական դասակարգմամբ)**

**(01.01.2014թ.- 30.12.2014 թ. ժամանակահատվածի համար)**

| Տողի NN | *Բա-ժին* | *Խումբ* | *Դաս* | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Տարեկան հաստատված պլան | | | Տարեկան ճշտված պլան | | | Փաստացի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Ընդամենը | այդ թվում | | Ընդամենը | այդ թվում | | Ընդամենը | այդ թվում | |
| | | | | | (ս.7+ս8) | վարչա-կան բյուջե | ֆոնդա-յին բյուջե | (ս.10+ս11) | վարչա-կան բյուջե | ֆոնդա-յին բյուջե | (ս.13+ս14) | վարչա-կան բյուջե | ֆոնդա-յին բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 2000 | *X* | *X* | *X* | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2200+տող2300+ տող2400+տող2500+տող2600+ տող2700+տող2800+տող2900+ տող3000+տող3100) | 182045.0 | 170252.4 | 11792.6 | 184528.8 | 172736.2 | 11792.6 | 177385.6 | 165608.5 | 11777.1 |
| 2100 | 01 | 0 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2110+տող2120+ տող2130+տող2140+ տող2150+տող2160+ տող2170+տող2180) | 42752.0 | 40152.0 | 2600.0 | 43212.0 | 39577.0 | 3635.0 | 41493.2 | 37901.6 | 3591.6 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | այդ թվում` | | | | | | | | |
| 2110 | 01 | 1 | 0 | *Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ* | 39092.0 | 36492.0 | 2600.0 | 40512.0 | 36877.0 | 3635.0 | 39232.6 | 35641.0 | 3591.6 |
| | | | | որից` | | | | | | | | |
| 2111 | 01 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում | 39092.0 | 36492.0 | 2600.0 | 40512.0 | 36877.0 | 3635.0 | 39232.6 | 35641.0 | 3591.6 |
| | | | | որից` | | | | | | | | |
| 2130 | **01** | **3** | **0** | ***Ընդհանուր բնույթի ծառայություններ*** | 310.0 | 310.0 | 0.0 | 310.0 | 310.0 | 0.0 | 309.6 | 309.6 | 0.0 |
| | | | | որից` | | | | | | | | |
| 2133 | 01 | 3 | 3 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 310.0 | 310.0 | 0.0 | 310.0 | 310.0 | 0.0 | 309.6 | 309.6 | 0.0 |
| 2150 | **01** | **5** | **0** | ***Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ*** | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | որից` | | | | | | | | |
| 2151 | 01 | 5 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ | | | | | | | | | |
| 2160 | **01** | **6** | **0** | ***Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)*** | 3350.0 | 3350.0 | 0.0 | 2390.0 | 2390.0 | 0.0 | 1951.0 | 1951.0 | 0.0 |
| | | | | որից` | | | | | | | | |
| 2161 | 01 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | 3350.0 | 3350.0 | 0.0 | 2390.0 | 2390.0 | 0.0 | 1951.0 | 1951.0 | 0.0 |
| | | | | որից` | | | | | | | | |
| 2180 | **01** | **8** | **0** | ***Կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտներ*** | | | | | | | | | |
| 2200 | **02** | **0** | **0** | ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող2210+2220+տող2230+ տող2240+տող2250 | 150.0 | 150.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2220 | **02** | **2** | **0** | ***Քաղաքացիական պաշտպանություն, որից*** | 150.0 | 150.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2221 | **02** | **2** | **1** | *Քաղաքացիական պաշտպանություն* | 150.0 | 150.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2300 | **03** | **0** | **0** | ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ և ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ | 150.0 | 150.0 | 0.0 | 100.0 | 100.0 | 0.0 | 100.0 | 100.0 | 0.0 |
| 2320 | **03** | **2** | **0** | ***Փրկարար ծառայություն, որից*** | 150.0 | 150.0 | 0.0 | 100.0 | 100.0 | 0.0 | 100.0 | 100.0 | 0.0 |
| 2221 | **03** | **2** | **1** | *Փրկարար ծառայություն* | 150.0 | 150.0 | 0.0 | 100.0 | 100.0 | 0.0 | 100.0 | 100.0 | 0.0 |
| 2400 | **04** | **0** | **0** | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2410+տող2420+տող2430+ տող2440+տող2450+ տող2460+տող2470+ տող2480+տող2490) | -4200.0 | 8800.0 | -13000.0 | 6500.0 | 19800.0 | -13000.0 | 12894.8 | 19611.3 | -6716.5 |
| | | | | այդ թվում` | | | | | | | | |
| 2430 | **04** | **3** | **0** | ***Վառելիք և էներգետիկա*** | | | | | | | | | |
| | | | | որից` | | | | | | | | |
| 2432 | 04 | 3 | 2 | Նավթամթերք և բնական գազ | | | | | | | | | |
| 2450 | **04** | **5** | **0** | ***Տրանսպորտ*** | 8800.0 | 8800.0 | 0.0 | 19800.0 | 19800.0 | | 19611.3 | 19611.3 | 0.0 |
| | | | | որից` | | | | | | | | |
| 2451 | 04 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | 8800.0 | 8800.0 | 0.0 | 19800.0 | 19800.0 | | 19611.3 | 19611.3 | 0.0 |
| 2490 | **04** | **9** | **0** | ***Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)*** | -13000.0 | 0.0 | -13000.0 | -13000.0 | 0.0 | -13000.0 | -6716.5 | 0.0 | -6716.5 |
